

ՀՈԼԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

(Արխիվային նյութեր քանդման պատրմությունից)

Ծարտարապետական հուշարձանները կարևոր են կատարում քաղաքների կյանքում: Նրանք քաղաքների գեղարվեստական կերպարի աճբաժանելի մասն են կազմում, նպաստում են քաղաքի ընդհանուր պատկերի ձևավորմանը, ստեղծում են որոշակի հոգեր և գեղարվեստական միջավայր:

1924 թվականին Թամանյանը, Երևանի նոր հատակագիծը կազմելիս, պատմական բոլոր հուշարձանները մերժավել էր նոր քաղաքաշինական կառուցմերում, և պետք է կազմվեին հետաքրքիր ճարտարապետական համալիրներ: Բայց շուտով արտահայտվեցին ժամանակի հակասությունները: Մի կողմից միտում կար հուշարձանները պահպանել, իսկ մյուս կողմից՝ նրանց պահպանումը դրված էր հարցականի տակ, որովհետև, համաձայն տիրող գաղափարախոսության, մերժողական վերաբերումունք գոյություն ուներ դեպի կրոնական շինությունները: Խորհրդային Միության գործեն բոլոր քաղաքներում վերացվում էին եկեղեցիները, իսկ լավագույն դեպքում շրջափակվում տարբեր շինություններով: Զերծ չմնացին առև Երևանը և Լենինականը (Գյումրի):

Գյումրիի կենտրոնական հրապարակի վերակառուցման ժամանակ U. Աստվածածին և U. Ամենափրկիչ եկեղեցիները «քղողակվեցին» դարոցի և հանրախամութի շնչերով, որի պատճառով աղավաղվեց հրապարակի ավանդական գեղարվեստա-ճարտարապետական միջավայրը: Նույն այս վերաբերումունքի գործ դարձան գեղարվեստական մեծ արժեք մերկայացնող քավմաթիվ եկեղեցիներ: Աչքի ընկնող եկեղեցիների քանդման հարցն սկսեց հիմնավորվել առև քաղաքներում նոր շինարարական աշխատանքներ սկավելու պատրիարքով: Երբայխորհրդի գործկոմը որոշում ընդունեց «Երևան քաղաքի տերիտորիայում պահպան կուստուայի պատմական հուշարձանների առանձնացման գոտի հաստատելու մասին»: Ցավոք, այդ որոշումն ինչ-որ չափով անուենիլու, երբ հարց բարձրացվեց Պողոս-Պետրոս և Կաթողիկե եկեղեցիների քանդման մասին:

Կաթողիկեն նույնական տիրող գաղափարախոսության գործ դարձավ: Ալրեն կատարված էր աններեկի սխալ՝ Պողոս-Պետրոս եկեղեցու քանդումը, որի հետևանքով հայ մշակույթը կրեց անդամապի կորուստներ: Ուստի Կաթողիկեի քանդման հարցում փորձում էին ավելի զգուշ մոտեցում ցուցաբերել՝ Ձկասի ու Անալով Պողոս-Պետրոս եկեղեցու կորստի ողբերգությունը: Այս հարցի շուրջ ժամանակին տեղի են ունեցել քազմաթիվ քննարկումներ և մտքերի փոխանակություններ: Այն տարբեր կարծիքների քախման և լայն բանավեճերի առիթ հանդիսացավ:

Կաթողիկեն վերաշինվել է Եղիազար Կաթողիկոսի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցած մեծ երկրաշարժից հետո (1679 թ.), ավերված հին եկեղեցու տեղում, ինչպես քաղաքի մյուս եկեղեցիները: Պատմիների վկայությամբ՝ եկեղեցին XIII դարից սկսած մի

քանի անգամ վերաբռովկել է:

Կաթողիկեն Երևանի աշխի ընկանող եկեղեցիներից մեկն է եղել, գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում, որը այն ժամանակ կոչվել է Շահար (Բին քաղաք): Շարդենի նկարագրությամբ՝ «քաղաքուն կային շատ եկեղեցիներ, որոնցից ամենազիավորներն են՝ իր կուիերիցներ (երկու երեսանի) կոչված Առաջնորդարանը և Կաթովիկը (Կաթողիկեն): Այս երկու եկեղեցիները գոյություն ունեն Հայաստանի թագավորների ժամանակներից»¹:

Եկեղեցու մասին կարելի է տեղեկություններ քաղել Հովհաննես Տայսկոպոս Շահիա-թումանցի, Մեսրոպ Սմբատյանցի, ի. Շոպենի, թ. Հակոբյանի աշխատություններից: Եր-վանի Շահազիզի վկայությամբ՝ Կաթողիկեն եղել է «Բատուկ օթևան Բոգորականների համար: Այստեղ են ապրել Մովսես Սյունեցի և Մելքիսեդ Կաթողիկոսները»²:

Հետևաբար, հուշարձանի շուրջը կառուցված են եղել նաև այլ շինություններ: Եկեղեցուն կից գործեղ է վարժարան:

«Թիշատակ է Ռափի Սրբազն Կաթողիկոսին ի դրուն Երևանու Կաթուիկէ եկեղեցու նորակերտ վարժարանին ի թուին 1230 (1781) և ի դեկտ. ամսեան»³. -Աշված է Մաշտոց-յան Մատենադարանի ձեռագրերից մեկի հիշատակարանում:

Այս եկեղեցուն ընդունակվում և պահպանվում էին շատ ձեռագրեր: Պատմությունից հայտնի է, որ Արդումբեկի որդի Խոչա Գրիգորը կառուցել է Կաթողիկեն ժամատունը և 1652 թ. եկեղեցական սպասքի հետ միասին նվիրել «չորս ձեռագրեր, որոնցից մեկը Հայս-մագուրը էր, մեկը՝ Շաշոց, մեկը՝ ոսկետոսկով մագաղաքա Ավետարան, իսկ մյուսը՝ Սաղմոսարան»⁴:

Երվանդ Շահազիզը հիշատակում է, որ 1923 թվականին «Երևանից հավաքվել և Էջմիածնի ձեռագրատանն են հանձնվել 78 ձեռագիր, որոնցից 25-ը պահպան էին Կաթողիկեն եկեղեցում»⁵:

Կաթողիկեն եղել է նաև Երևանի գոյության կենտրոններից մեկը:

Վերաշինությունների հետևանքով մեծացել է ոչ միայն կառուցի ծավալն ու չափերը, այլև եկեղեցու գեղարվեստական արժեքը: Այստեղ հայտնաբերած որմնանկարները, ինչ-պես և Պողոս-Պետրոս եկեղեցունը, ըստ Գարեգին Լևոնյանի, կատարել է Նաղաշ Հովհանքանը:

Եկեղեցին զբաղեցնում էր այժմյան Սալյաթ-Նովա և Աբովյան փողոցների խաչմերուկը: Այստեղ, երկի թե, պետք է ստեղծվեր գեղարվեստորեն հագեցած քաղաքաշինական հանգուց: Հատ Թամանյանի հատակագծի՝ այս հուշարձանը ևս ընդգրկված էր նոր հատակագծում: Ցավոք, իշխանությունները նպատակահարմար գտան կառուցել դպրոցական շենք և սկսեցին եկեղեցունը, ըստ Գարեգին Լևոնյանի, կատարել է Նաղաշ Հովհանքանը վերաբերվող հյութերը:

¹ «Путешествие Шардена по Закавказью в 1672-1679», վերցված է Թ. Շակոբյանի «Երևանի պատմությունը» (1500-1800 թթ.) գրքից, Երևան, 1971 թ. (ինչպես նաև հաջորդ վկայությունները), էջ 352:

² Նոյն տեղում, էջ 356:

³ Նոյն տեղում, էջ 379:

⁴ Նոյն տեղում, էջ 383:

⁵ Նոյն տեղում, էջ 382:

Եկեղեցու քանդմանը հետևեց Հնությունների պահպանության կոմիտեի նամակը քաղաքի ղեկավար մարմիններին⁶:

(Արձանագրություն – 9.I.37թ.)

Հուշարձանների Պահպանության կոմիտեն խնդրում է հետաձգել 10 օրով կաթողիկե եկեղեցու 13-րդ դարի հուշարձանի գմբեթի քանդումը, մինչև այդ հուշարձանի չափազ-րության և ֆրեսկոների արտանկարման աշխատանքների ավարտումը: Մերժելու դեպքում կոմիտեն ստիպված կլիմի գործը հաճախել դատախազության:

Կմ. փոխնախագահ՝ Հ. Թումյան

Այնուհետև ստեղծվեց մասնագետներից կազմված հանձնաժողով՝ որոշելու համար շինության կարևորությունը և գեղարվեստական արժեքը:

Քաղվածք

Խ. Հ. Կենտգործկոմի նախագահության նիստի

N19 արձանագրությունից

21 հունվարի 1937 թ.

ՀՍԵՑԻՆ

Երևանի Քաղյորիրդի կողմից քանդվող կաթողիկե նախկին եկեղեցու շենքի պատմա-հնագիտական ուսումնասիրությունը կազմակերպելու մասին:

/Գործ Առ 535/

/Զեկ. ընկ. Հ. Թումյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

ա) Երևանի Քաղյորիրդի կողմից քանդվող կաթողիկե նախկին եկեղեցու շենքի պատմա-հնագիտական ուսումնասիրությունը կատարելու, ինչպես և շենքի չափագրելու, լուսանկարելու, արձանագրությունները էստամպաժամելու համար պահանջվող ժամանակամիջոցը և հնարավորությունները պարզելու նպատակով ընտրել հանձնաժողով քաղկացած հետևյալ ընկերներից:

1. Ռ. Դաշտոյան (նախագահ)
2. Հ. Զորյան (անդամ)
3. Հ. Թումյան (անդամ)
4. Ս. Բարխուդարյան (անդամ)
5. Հ. Միրզոյան (անդամ)

բ) Ընտրված հանձնաժողովին հանձնարարել ներկայացնել կենտգործկոմին իր եզրակացությունը:

Քաղաքային իշխանության կարծիքն արտահայտվեց 1937 թ. փետրվարի 2-ի հետևյալ

⁶ Արձանագրությունների տղաքրությունը ընրում ևնք նոյնությամբ՝ համապատասխանեցնելով միայն այժմյան ուղղագրությանը:

գրության մեջ.

Դպրոցի շինարարության իրականացման համար անհրաժեշտ է անհապաղ քանդել եկեղեցին, որն իր մեծ մասով ընկնում է դպրոցի շինարարության տարածքում, այդ պատճեռով խոսափել եկեղեցու քանդումից տվյալ դպրոցական ուրվագծի դեպքում անհնարին է: Խոսք չի կարող գնալ եկեղեցու քանդման անհրաժեշտության մասին: Ինչ վերաբերվում է 13-րդ դարին պատկանող մատուին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ.

1. *Մատուիի մի մասն արդեն քանդված է: Այդ պատճեռով հուշարձանն ամբողջությամբ պահպանության մասին խոսելու կարիք չկա:*
2. *Ինչ վերաբերվում է ճարտարապետական մանրամասնություններին՝ այս հուշարձանը համեմատած այլ հուշարձանների հետ իրենից առանձնահատուկ արժեք չի ներկայացնում: Հուշարձանը հետաքրքրություն է ներկայացնում իր հնությամբ, իր քարերի վրայի արձանագրություններով: Դրա համար էլ ցանկալի է հուշարձանի պահպանումը⁷:*

Ստեղծված առաջին հանձնաժողովի կարծիքը դպրոցական շենք կառուցելու անհրաժեշտության մասին հանգեց նրան, որ եկեղեցու ուսումնասիրման համար ստեղծվեց մասնագետներից կազմված նոր հանձնաժողով:

Հ.Ս.Խ.Հ. Կննուգործկումի ... Ախմագահության ... Շիստի N2 արձանագրությունից

7 փետրվարի 1937 թ.

ՀՍԵՑԻՆ

Դպրոցաշինարարության հետևանքով քանդելու ենթակա կաթողիկե եկեղեցու Ծարտարապետական և պատմա-հնագիտական արժեքը պարզելու համար հասուն հանձնաժողով կազմակերպելու մասին:

/գործ Առ. 535/

/գեկ. ընկ. Ռ. Դաշտոյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

Դպրոցաշինարարության հետևանքով քանդելու ենթակա կաթողիկե եկեղեցու Ծարտարապետական և պատմա-հնագիտական արժեքը պարզելու համար հաշվակել հասուն հանձնաժողով հետևյալ կազմով.

1. *Մայիսավան Վ. (Ախմագան)*
2. *Զորյան Հակոբ*
3. *Քալամբար Աշխարհբեկ*
4. *Բումիաթյան Նիկոլայ*
5. *Բարիստարյան Նիկոլայ*
6. *Թումյան Հ.*


⁷ ՀԱԱ, ֆ. 1063, գ. 1, գ. 306, լգ 5:



Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՐԱՌՈՒՐ ՏԵՍՔԸ ԱՐԵՎԵԼՔԻՑ
Լուսանկարը՝ Ա. Վրույրի, 1937 թ.
Հայաստանի Պատմության պետական թանգարան, N 6280



Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԾ
Լուսանկարը՝ Ա. Վրույրի, 1937 թ., ԴՊԹ, N 6283





Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԱՏՅԱՆ ճԱԿԱՏԸ
Լուսանկարը՝ Ա. Վրոյիք, 1937 թ., ԴՊԴԹ, N 6281



Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԱՏՅԱՆ ճԱԿԱՏԸ
ՔԱՄՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Լուսանկարը՝ Ա. Վրոյիք, 1937 թ., ԴՊԴԹ, N 6285

7. Ղաֆաղարյան Կ.

Հանձնարարել հաճախաժողովին 1 օրվա ընթացքում տեղում ուսումնասիրել այդ հարցը և տալ իր գրավոր եզրակացությունը: Ներկայացնել Կենտգործկոմին⁸:

Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն էր՝

Նյութ 1

Արձանագրություն

Հուշարձանների Պահպանության Կոմիտեի 1937 թ. հունվարի 9-ին տեղի ունեցած խորհրդակցությունից

Ներկա էին – Հ. Թումյան, Գ. Լոռյան, Ե. Շահազիզ, Տարագրոս, Գ. Հովսեփյան, Կ. Ղաֆաղարյան, Ա. Քալանթար, Հ. Եղիազարյան

Հանցին – Երևանի Կաթողիկե եկեղեցու շենքի քանդելու վերաբերյալ Քաղյուրիդի որոշման մասին:

Մտքերի փոխանակություն

Ե. Շահազիզ

Կաթողիկեի մասին մանրամասն խոսում է Շարդենը: Առանձնահատկությունները կազմում են խորանների պատերի մեջ դրված առանձին հիմ բեկորները, որոնք պատկանում են 12-րդ դարին և ամբողջությամբ պահպանել, սակայն Ակատի ունենալով, որ քանդում են՝ ամբողջությամբ կատարել չափագրություններ և լուսանկարներ, և հասուլ հնկողություն ունենալ հնագիտական արժեքները հավաքելու համար:

Տարագրոս

Եկեղեցու սեղանին կից խորանների արևելյան պատը յուրահատուկ ձև ունի ճարտարապետության տեսակետից: Գմբեթի կառուցվածքը նույնական պես ունի յուրահատկություններ, որոնք վերաբերում են 11-րդ դարին: Սեղանի պիյաստրներն ու խոյակներն իրենց կառուցվածքով 11-րդ դարի են, ինչպես և պատի հիշերի ամեն կետը պետք է պահպանել:

Գ. Լոռյան

Քրիստոնեության տարածման ժամանակ ամրողովին ավերվեց հեթանոսական շրջանի կուլտուրան, և ոչ մի պատմական հնագույն չկամ հրանցից այժմ. չպետք է այդ թույլ տալ նաև Աերկայումն քրիստոնեական-ֆեոդալական շրջանի Այութական կուլտուրայի մնացորդների պահպանը: Հոռոմում նոր շենքերի կառուցմամբ չեն քանդում հուշարձանները, որին և նոր Հոռոմն իրար կից են: Արձանագրելով Կաթողիկեի

քանդումը՝ պետք է նախազգուշացնել, որ հետագայում ձևան դեպքեր տեղի չունենան:

Աշխ. Քալանթար «Բողոքում էր եկեղեցու քանդման դեմ» և նշում էր, որ բոլշարձամի ուսումնասիրությունը չի նշանակում նրա արժեքի պահպանումը: Հուշարձամի ներսում նոր բացված մնացորդները հաստատում են նրա անվիճելի 7-րդ դարին պատկանելը: Անհանդուրժելի է, եթե առանց խնդիրը համաձայնեցնելու սկզբել է քանդումը, որ անկախ դրամից էլ, հնարավորությունը չի տրվում կատարելու ամենաանհրաժեշտ ուսումնասիրությունը:

Հուշարձամի վրա նկատվող բազմաթիվ, տարրեր ժամանակներին պատկանող կառուցումները մնեն արժեք են տալիս նրան, որպես տարրեր էպոխաների արժեք մերկայացնող հուշարձամ: Որպես 7-րդ դարին պատկանող հուշարձամ ոչ մի կերպ չպետք է թույլ տալ նրա քանդումը: Եթեն վերադաս մարմինները հաշվի չառնեն տեղական գիտ, հիմնարկներին; ապա պիտի հարցը փոխադրել կենտրոնական գիտ, հիմնարկներ՝ Ակադեմիա:

Առաջարկություններն ընդունվում են: Դեմ է ընկ. Քալանթարը, որը շարունակում է պնդել քանդումները կտրականապես արգելելու վրա:

Բնորենք ևս մեկ պաշտոնական կարծիք եկեղեցու քանդման աշխատանքների վերաբերյալ:

Հ. Թումյան

Ոչ ոք Հուշ. Պահապ. Կոմիտեին չի արգելում ուսումնասիրել, չափագրել, լուսանկարել կաթողիկեն: Առաջարկում եմ չառարկել կաթողիկենի նոր մասի քանդման դեմ՝ հնարավորություն տալով Քաղյորիրդին կառուցելու դպրոցական շենքը այդ վայրում: Թե որ մասը կունենա հնագիտական արժեք, այդ կորոշի քանդումների ընթացքում սահմանված արխեոլոգիական հսկողությունը: Համենայն դեպք, Կաթողիկենի վերաբերյալ եղած տեղեկություններն ասում են, որ նոր շրջանի շինությունը միայն պարունակում է հին մասեր, անա այդ հին մասերը պետք է պարզել: Հուշ. Պահապ. Կոմիտեն օշանակում է կաթողիկենի չափագրող ընկ. Տարագրոսին, Ակադեմիայի ընկ. Արա Վրույրին և արխեոլոգ ընկ. Կ. Ղաֆարյանին: Այդ կազմը, ըստ կարիքի, հետագայում կուժեղացվի նոր աշխատակիցներով:

Առաջարկությունն ընդունվում է: Դեմ է ընկ. Ա. Քալանթարը, որը շարունակում է պնդել քանդումները կտրականապես արգելելու վրա:

ՀԱԱ, ֆ.1063, գ.1, գ.306, էջ 1-2

Հուստողկոմի կողմից հրավիրված հիշյալ հանձնաժողովի մասնակցությամբ ճարտարապետներ պրոֆ. Նիկողայոս Բումբաթյանին և Միքայել Մազմանյանին, պատմաբաններ պրոֆ. Աշխարհբեկ Քալամթարին, Հ. Զորյանին, արվեստագետ Տարագրոսին հանձնարարվում է տալ եզրակացություն Երևանի «Կաթողիկե» հուշարձանի պատմա-հնագիտական և ճարտարապետական արժեքի մասին:

Հանձնաժողովի եզրակացությունը.

1. Նյութի մերկա վիճակով պարզվում է, որ ամրող շենքը բաղկացած է երկու հուշարձանից (մեծ և փոքր), և մի շարք տարրեր դարերին պատկանող կառուցումներից: Հուշարձաններից մեկը՝ մեծը իր պլանով, հիմքերով և պատերի մերքին շարվածքներով ունի 7-րդ դարին պատկանող հուշարձանների առանձնահատկություններ, երեք մեֆանի բազիլիկա կենտրոնական առանցք ունեցող, մերքին չորս պիլոնների վրա բարձրացող գմբեթով: Այս տիպի կառուցումից հայատանում կան ընդամենը չորս հուշարձան (Գայանե, Մրեն, Բագավան, Օծուն՝ Խորիրդային Հայաստանում սրանցից միայն երկուսը, իսկ Վրաստանում՝ մեկը /Ծրումիլ/): Այս տիպը խոշոր արժեք ունի քրիստոնեական ճարտարապետության գարզացման տեսակետից: Հուշարձանի վերին կեսը ենթարկվել է ձևափոխության հետագա դարերում՝ անաղարտ պահպանելով հատակագիծը և մերքին շարքերը:

Փոքր հուշարձանը պահպանվել է իր ամիսին ձևով, և կրել է ամհամնաւության վեջ փոփոխություններ: Սա իր կառուցման տեխնիկայով՝ քարերի մեծությամբ ու բարձրությամբ, տաշվածքով ու շարվածքով ունի 10-11 դարերի հուշարձանների բոլոր բնորոշ հատկանիշները նման Ամրի Մայր եկեղեցում՝ Մարմարաշենին. իր թե՛ տեխնիկայով և թե՛ պլանով ու մերքին մշակությամբ, որմնասցումներով, խոյակներով: Հուշարձանն ունի ճարտարապետության մեջ հնատարքություն և խնդիրների օրիգինալ լուծում, որոնք ուսանելի են նաև մեր օրերում:

2. Կաթողիկե հուշարձանը իր թե՛ հնությամբ (7-րդ դար) և թե՛ մի շարք տարրեր դարերի նորոգումներով ու կառուցումներով (7-18 դդ.) մերկալացման է պատմահնագիտական ու ճարտարապետական ուսումնասիրության համար բացառիկ արժեքի հնություն, որը ծանոթացնում է մեզ թե՛ տարրեր ծանանակաշրջանների կառուցողական արվեստի առանձնահատկությունների և թե՛ Երևան քաղաքի պատմության մի շարք էպոխաների հետ: Այս արժեքը մեծանում է գրանով, որ շենքի՝ հատկապես ավելի անաղարտ պահպանված փոքր հուշարձանի պատերի վրա պահպանվել են բազմաթիվ արձանագրություններ: 13-17 դարերից մինչ այժմ բացվել է 9 արձանագրություն՝ 1363, 1303, 1318, 1498 (1598), 1605, 1609 թվ., որոնք իրենց բովանդակությամբ՝ պատմական, օրենսդրական (դեկրետավիճ) և նվիրատվական, և թե՛ գրչության արվեստի պալեոգրաֆիական առանձնահատկությունների տեսակե-

տից առաջնակարգ տեղ են գրավում հայ վիմագրական արձանագրությունների շարքում, և Անդրկայացնում են բացառիկ արժեքի պատմական դոկումենտներ Երևան քաղաքի պատմության համար (1263 թվի արձանագրությունը մի դեկրետ է վերաբերող Երևանին, տրվեց Ամիհ «Տամզաչ» կառավարից այդ Սահմանին կողմից Ելգանի /Մոնղոլ. արևմտյան կայսրության/ օրոք: Հուշարձանի անունը՝ Կաթողիկե», որը եկեղեցու ճարտարապետական տիպի հիմաստ ունի – մեծ գմբեթով և միաժամանակ այն համագամանքը, որ այդպես կոչվում էին կարևոր քաղաքական-կուստուրական կենտրոն հանդիսացող քաղաքների Մայր եկեղեցիները միայն: Ամիհ, Վաղարշապատի, Դվինի, Նոուշի, Հաղպատի կաթողիկեներն ապացուց են հանդիսանում Հին Երևանի առաջնակարգ դերի, մի բան, որ որ է միայն պարզվում մեզ համար:

3. Կաթողիկե հուշարձանն իր գոյության ամբողջ ընթացքում 17-րդ դարից մինչև մեր օրերը տևել է մի շարք մեծ երկրաշարժեր. Առաջ վերանորոգումները համբանում են այն ժամանակներին, որոնք անմիջապես հետևում են մեզ հայտնի մեծ երկրաշարժերին, որոնք խոշոր ավերածություններ են գործել այս միջավայրում (9-րդ դարի սկզբում, 9-րդի վերջում Դվինի կործանումը, 14-րդ դ. Ամիհի կործանումը, 16-րդ, 17-րդ դդ. Երևանի և շրջանների ավերումը): Հանձնաժողովը Զշում է հուշարձանի սեղմիկ հետազոտության համար ունեցած խոշոր նշանակությունը: Երկրաշարժի հետքերը բացվելու են հուշարձանի պատերի ծեփերի տակ:
4. Բացի վերոհիշյալ Ցյուֆերից շատ ուշագրավ են և կերպարվեստի տեխնիկայի տեսակետից մեծ արժեք են Անդրկայացնում այն ֆրեսկոները, որոնք բացվեցին արտաքին ծեփի տակ երեք տարրեր սվաղաշերտերի վրա՝ իրար վրա Ակարված ջրաներկով և յուղաներկով. Այուժնն մարդակարներ և բուսական ստիլիզացիա, ուշագրավ է ծաղկենակարների մեջ բամբակի կոկոնի և դաֆրանի ծաղիկների գերակշռությունը:
5. Եզրակացություն: Նկատի ունենալով վերոհիշյալը՝ հանձնաժողովը գտնում է անհրաժեշտ:

 - ա) Պահպանել փոքր հուշարձանն ամբողջությամբ՝ մաքրելով ներսի ծեփերի պատերի վրայից, որի տակ կարող են հայտնաբերվել նոր այլ արձանագրություններ ևս՝ պահպանելով ճակատի ծեփերը ֆրեսկոներով երեք շերտի վրա:
 - բ) Մեծ հուշարձանը պահպանել իր մերքին շարքերով, որոնք պատկանում են 7-րդ դարի շեմքին:
 - գ) Նշել, որ քանդումը կատարվում է այնպիսի պայմաններում, առանց կազմակերպված վերահսկողության, եթե անուշադիր են մնում գիտական պահանջները, որի հետևանքով արդեն վճառվել են և ոչնչացել մի քանի խիստ կարևոր մասեր: Հանձնաժողովը գտնում է անհրաժեշտ մեծ հուշարձանի պատերի վերին մասերի քանդումը կատարել հնուտ մասնագետների վերահսկողությամբ ֆիկսացիայի ենթարկելու համար բացվող յուրաքանչյուր փոփոխությունը շնորհի կառուցվածքի մեջ՝ կապված տարրեր էպոխաներում նորա կրած հիմնական նորոգումների հետ և առանձնացնելու կարևոր բնկորները:

Հնկ. Զորյանը, գտնելով շատ հետաքրքիր շենքի 7-րդ դարի վերաբերելու մասին հանձնաժողովի կարծիքը, նրա վերջնական պարզաբանումը կապում է շենքի վրա կատարվելիք ուսումնասիրության հետ:

**Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
Քաղաքացիության վերաբերյալ կանոնադրությունի նշանակած հանձնաժողովի եզրակացությունը:
/գեկ. ընկ. Ռ. Դաշտոյան/**

ԼՍԵՑԻՆ

Ներկայում քանդվող կայողիկեն նախկին եկեղեցու շենքի մեջ եղած միջնադարյան հուշարձանի վերաբերյալ կննուզործկումի նշանակած հանձնաժողովի եզրակացությունը:
/գեկ. ընկ. Ռ. Դաշտոյան/

ՈՐՈՇԵՑԻՆ

Նկատի ունենալով, որ դպրոցական շինարարության համար ներկայում քանդվող կայողիկեն նախկին եկեղեցու շենքի մեջ դուրս եկած հուշարձանը պատկանում է 12-13-րդ դարերին, և իր արձանագրություններով ներկայացնում է խոշոր պատմական արժեք ոչ միայն Երևան քաղաքի, այլև ընդհանրապես Հայաստանի պատմության ֆեռալական ժամանակաշրջանի ուսումնասիրության համար, անհրաժեշտ համարել պահպանել այդ հուշարձանը, որի համար առաջարկել՝

1. Երևանի Քաղաքություն՝

ա) Վերակազմել հուշարձանի հողամասում կառուցվելիք դպրոցական շենքի նախագիծն այն հաշվով, որ դուրս եկած 12-13-րդ դարի հուշարձանը պահպանվի:

բ) Կատարել սեփական բանվորական ուժերով այն բոլոր աշխատանքները, որ Հուշարձանների Պահպանության Կոմիտեն կիմարի անհրաժեշտ հուշարձանն ավելորդ ծնկերից, հողից, կողմնակի պատերի մնացորդներից ազատելու և պատշաճ վիճակի մեջ դնելու համար:

գ) Հուշարձանի արձանագրությունները, քանդակները և ֆրեսկոները պահպանելու համար ամբողջ հուշարձանը ժամանակավորապես ծածկել տախսակով՝ դեկարվելով Հուշարձանների Պահպանության Կոմիտեի ցուցմունքներով:

2. Հուշարձանների Պահպանության Կոմիտեին հանձնարարել կազմակերպել հուշարձանի պահպանությունը:

ՀԽՍՀ Կննուզործկումի քարտուղար Ռ. Դաշտոյան

Քանդման ժամանակ գտնված են եղել մի քանի տասնյակ ամբողջական կամ բնեկորների վերածված արձանագրություններ, որոնք բացվել են եկեղեցու պատերի վրայից, քանդվող դամբիճի պատերի միջուկից և հիմքերի միջից: Ըստ երևույթին այդ քարերի բնեկորներն օգտագործվել են երկրաշարժից հետո եկեղեցին վերականգնելու ժամանակ:

Եկեղեցու արձանագրություններն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և հրատարակել է Բնագետ-վիմագրագիտ Կարո Ղաֆադարյանը¹⁰:

Այստեղ մենք ցուց կտանք միայն արխիվի փաստաթուղթերից վերցված մի քանի արձանագրություններ, իրենց մեկնաբանություններով, որոնք առանձնապես հետաքրքիր են Երևան քաղաքի անցյալի պատմության համար:

Արձանագրությունները ներկայացնում ենք այն ձևով, ինչպես որ պահպանվել են արխիվում: Դրանք թվով թիվն են:

Արձանագրություններ

Թիվ 1

«Ի թվին 1264 (ԶԺԳ), Աստծո ողորմության և եղանի (փոխարքայի) ուժով, ես պարո՞ւ Ավետենց որդի Սահմադինս զնեցի Երևանը, իր բոլոր հոդով ու ջրով և հետևյալ կարգը սահմանեցի. ով որ Երևանում հոդ գնած լինի և վկաներով ու մուրհակով հաստատված լինի և տասամորդը (հարկ) վճարած, և ով որ իր այլ տեղում եղած նախկին հոդամասը թողած լինի ու եկած բնակած լինի և մի տարի անցած լինի՝ այլևս իր նախկին տեղում եղած հոդի վրա իրավունք չունի: Ով որ այս օրենքը խախտի և թշնամությամբ սուտ ու սիալ տեղը խոռվություն բարձրացնի՝ խոռվության համար սահմանված տուգանքը տա: Ով որ այս օրենքին հակառակի, և գրածն խափանն՝ երեք սուրբ ժողովներից նգովվի, հույսոյի բաժինն ստանա և Աստված գլխին խոռվ կենա և բոլոր ազգերի նգովքը նրա վրա լինի»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Այս արձանագրությունը Երևանի գննան կալվածագիրն է, որ վերաբերվում է 1264 թվ.: Որպես այդպիսին՝ եզակի է ոչ միայն Երևանի, այլև ընդհանրապես Հայաստանի պատմության համար. նման ուրիշ փաստաթուղթ չկա գրավոր կամ արձանագրական:

Դա մի չափազանց կարևոր պատմական դրկումննն է, որ լուս է սփոռում ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա՝ պարզեցով ճորտական իրավունքի հիմնական մոմենտները ֆեռադական Հայաստանում: Այստեղ Ամին Բայտմի հարկահավաք Սահմադինը (13-րդ դար), գնեղով Երևանը, մի տարի բնակվողին գրկում է այլ վայր տեղափոխվելու իրավունքից:

Թիվ 2

«Աստծո շնորհիվ ես Գեշմարդս

¹⁰ Կարո Ղաֆադարյան, Երևանի Միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975 թ.: Տե՛ս նաև Ղաֆադարյան, Երևանի Կաթողիկեսի և նորահայր հուշարձանի վիմական արձանագրությունները, «Տեղեկացի» ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի, Գիրք 1, Երևան, 1938 թ.:

միարանեցի Երևանի ժամատեղերին

և նվիրեցի իմ երկու կրակակները (խաճութեները)

իրենց ներքնատներով և կից շենքերով և այլ բազմաթիվ նկամուտներ և
այստեղի քահանաները սահմանեցին մեզ տարեկան յոթն պատարագ՝ մեկը Գեշմար-
դում, մեկը Ամրուրսեին, մեկը Մամախաթումին, մեկը Պետրոսին, մեկը Պողոսին, մե-
կը Նուրսեին, մեկը Մամրեին: Կատարող ներք օրհնվին Աստծոց
և խափանողները պատժեն (Աստծոց) թվին 1301»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Երևան քաղաքի պատմության մասին պատմական տեղեկություններ կան միայն 16-րդ դարից սկսած. այս արձանագրությունն ապացուցում է, որ Երևանը 13-րդ դարում եղել է քաղաքատիպ - առևտրական վայր, ունեցել է շուկա: Պատմությունից հայտնի է, որ միայն քաղաքատիպ առևտրական վայրերում են եկաղեցիներին խանութներ նվիրել:

Սրանով ժխտվում է ենթադրությունների վրա հիմնված այն կարծիքը, թե Երևանը միջ-
ադարում սուկական գյուղ է եղել:

Թիվ 3

«Բարերար Աստծո կամքով և Ս. Հոգու ազդմամբ ես Գորգ, Աստուծո
մեղավոր ծառա և իմ ամուսին Դովլաթը միարանեցինը (նվիրեցինը)

Երևանի (այս) ժամատեղերին նորազավիթ Դիվլան (կոչված հանդից) մեր

50 կոպչոտեղ հողը և սպասավորները (սույն եկեղեցու քահանաները)

խոստացան տարին երկու պատարագ կատարել՝ մեկը ինձ և մեկը Դովլաթի ամունով:
Կատարող ներք օրհնվեն Աստծոց. ի թվին 1318»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱ

Այս արձանագրությունը միակն է, որպես պատմական փաստաթուղթ, մեր միջնադար-
յան գրականության մեջ: Այս եզակի դոկումենտի հիման վրա մենք այժմ հնարավորութ-
յուն ունենք ճշտորեն որոշելու Հայաստանի ֆեռալական կարգերում ընդունված հոդի
արժեքը: Այդ արձանագրության մեջ նշանակված է հոդի չափը: Այստեղ «50 կապճի» տե-
ղին տրված է 2 պատարագ: Պատարագի գիմն արդեն հայտնի է պատմությունից: Նա ե-
ղել է 20 արծաթ (որամական միավոր): Դրանից մենք վատահորեն կարող ենք եզրակաց-
նել, որ 50 «կոպճի» (հավասար է 50 կոտ սերմ ցանքող հոդամասի) արժեքը եղել է 40 ար-
ծաթ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի ֆեռալական ժամանակաշրջանի տնտեսական
պատմությունը տակավին շատ թույլ է լուսաբանված: Այդ տեսակետից վերոհիշյալ ար-
ձանագրությունը մեզ համար ստանում է բացադիր արժեք Հայաստանի տնտեսական
պատմության համար:

Թիվ 4

«Օահաբասի թագավորության, Ամիրգունա խանի իշխանության, Տեղ Մելքիսեդէ Կա-

թողիկոսի հայրապետության և Տեղ Համազասպի Եպիսկոպոսության օրոք ես՝ Գրիգոր Թեղագովեմց Մարգարի որդի, և իմ ամուսին պարոն Խաթունը միաբանեցինք (Եկեղեցու) և շինեցինք այսուելի գավիթը հիմքից և ուրիշ բազմաթիվ եկամուտներ տվեցինք: Սուրբ տաճարին և Եկեղեցու ծառայող Ծննդը (քահանաները) խոստացան տարեկան երկու պատարագ կատարել մեկը (Գրիգոր Լուսավորչի) խոր Վիրապից դուրս գալու և մեկը խոր Վիրապ մտնելու տուներին, գրիս կատարող Ծննդը օրինվեն Աստծոց, թվին 1609, Հակոբ գրողիս հիշեցեք»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱՆ

Ըստ Բարի այս արձանագրության որոշվում է այնունի հիշված պատմական անձնավորությունների գրությունների թվականը: Միաժամանակ պարզվում է, որ 1673 թվին մեծ երկրաշարժի ժամանակ ավերվել են ոչ թե այսուել գտնվող կրոնական բոլոր շենքերը, ինչպես կարծվում էր մինչև այժմ, այլ այս արձանագրության մեջ հիշված գավիթը միայն, որի տեղում շինվել է մեծ Եկեղեցին 1694 թվից, որ 12-13-րդ դարերի հուշարձանն էր, իր միջև օգտագործելով որպես բնույթ:

Թիվ 5

«Ասսծո կամքով ես Դավիթս իմ սրտի կամքով, իմ այգու երեք փայլ տվի Սուրբ Կաթողիկեան Ավետ: Սպասավորները (քահանաները) խոստացան տարին երկու պատարագ կատարել, գրիս կատարող Ծննդը օրինվեն Աստծոց, թվին 1538»:

ԿՈՄԵՆՏԱՐԻԱՆ

Այս արձանագրությունը, ինչպես Ավետարվականը և այլ բազմաթիվ արձանագրություններ, ապացուցում են, թե հոգևոր Փետրալները ինչպես էին օգտագործում կրոնական թուղթները Եկեղեցիների շուրջը կուտակելու համար խոշոր կալվածներ*:

Եկեղեցու քանդման հետո կապված մի ամփոփիչ հոդվածով համելես Եկավ հնագետն Ս. Բարիսութարյանը: Դրան նախորդեց Հնությունների պահպանության կոմիտեի ուղղած նամակը «Սուրբ Իրիդային Հայաստան» թերթի խմբագրությանը, որում ասվում է: «Ուղարկելով Հայաստանի Հուշարձանների Պաշտպ. կոմիտեի ավագ գիտաշխատող ընկ. Ս. Բարիսութարյանի հոդվածը՝ «Հազվագյուտ Այութեր Երևանի պատմության համար» խորագրով, խնդրում ենք գետեղել այն «Խ. Հ.»-ի մոտակա համարներից մեկում, հնարավորության չափ առանց կրնատումների, որովհետև դա առաջին հնֆորմացիան է Երևանում հայտնաբերված արժեքավոր հուշարձանի մասին»:

Ներկայացնում ենք այդ հոդվածն ամբողջությամբ:

Հուշարձանների Պաշտպ. կոմիտեի քարտուղար՝ Թումյան

Հազվագյուտ Այութեր Երևանի պատմության համար

(«Խորիրդային Հայաստան» թերթի համար)

* ՀԱԱ. § 1063, գ. 1, գ 306, լ 23-27:

Երքայիտորհութի որոշմամբ Աբովյան փող. վրա գտնվող Կաթողիկէ նախկին եկեղեցու վայրում պետք է կառուցվի խոշոր դպրոցական շենք: Այդ նախկին եկեղեցու շեմքը կառուցվէլ է 17-րդ դարի վերջին և ճարտարապետական ու պատմահնագիտական տեսակետից արժեք չէր ներկայացնում:

Միայն այդ նորակառույց շենքի արևելյան պատի կենտրոնական մասը և նրա բարձրացող զմբեթը իրենց երևացող մասերով ցուց էին տալիս հնության նշանները: Հնությունների Պահպանության Կոմիտեի ձեռք առած միջոցներով քանդման աշխատանքները վերածվեցին իսկական պեղումների: Նախապես ճարտարապետական չափագրությունների ենթարկվեցին բոլոր շենքերը, այնուհետև մշտական հսկողության շնորհիվ մանրամասն ֆիկսացիայի ենթարկվեցին քանդվող շենքի բոլոր մասերում երևան եկած առանձնահատկություններն ու հավաքվեցին պատերի միջից դուրս եկած 13-17-րդ դարերին պատկանող բոլոր քանդակագրությունները:

Պարզվեց, որ «Կաթողիկեն» շենքն ունի երկու մաս: Դրանցից մեկը շենքի արևելյան մասում, զմբեթի տակ գտնվող մասը զմբեթով միասին ավելի հին է, իսկ նրա առաջ կառուցած մեծ բազիլիկաձև մասը 17-րդ դարի վերջի շենք է: Մի քանի մասնագետների ենթարկությունները այդ նոր շենքի ներքին մասերում 7-րդ դարի շինության հետքեր լինեն դուրս եկած պարերյալ ամենամեծ դուրս եկան:

Շենքի արևելյան մասում բացվեց մի բոլորովին ինքնուրույն հուշարձան, 12-13-րդ դարերում շինագած, որը երեք կողմից առնված էր վերոնիշյալ 17-րդ դարի շենքի մեջ և արևմտյան պատը բաց արվելով օգտագործվել էր վերջինիս համար որպես արսիդա: Երբ այդ փոքրիկ արժեքավոր հուշարձանը երեք կողմից բացվեց, այն ժամանակ միայն երևան եկան նրա ճարտարապետական և պատմահնագիտական արժեքները: Նախ և առաջ դա ճարտարապետական մի հետաքրքիր հուշարձան է և գրեթե միակը Երևանում: Բացվեցին նրա պատերին մի շարք արձանագրություններ՝ 13-14-րդ դարերից, որոնք բոլորովին եզակի արժեք ունեն Երևանի պատմության համար: Ամենահինը կրում է 1264 թ.:

Նրանք միանգամայն նոր լուս են սփոռում Երևան քաղաքի պատմության վրա 13-14-րդ դարերից մինչև 17-րդ դարը: Միաժամանակ խոշոր պուրակ մատակարարում Հայաստանի տառեսական զարգացման պատմության համար:

Հուշարձանը ճարտարապետական իր մի շարք կազմերով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Սա առաջմտ միակ շենքն է Երևանում, որ միջնադարից ամբողջ վիճակով մինչև մեզ է հասել:

Ի՞նչն է պատճառը նոր հուշարձանի այդ դիմացկունության: Բացի ընդհանուր կոնստրուկտիվ համաշափություններից պետք է ենթարել, որ շենքի դիմացկունության հիմնական ազդակն է հանդիսացել հետևյալ բացառիկ տեխնիկական պրինտը:

Ակսած ամենաներքին քարաշարքերից մինչև նույնակ զմբեթի շարքերը յուրաքանչյուր վերին քարաշարքը ներքինի համեմատությամբ 5 միլիմետրով ներս է քաշված, պատերի թե՛ արտաքին ու թե՛ ներքին կողմերից, այսպիսով քարերի շրթումները երբեք չեն հանդիպում իրարու և պատերի վերին մասերը ավելի նեղ են, քան ներքինները, սակայն այդ բոլորը այնպես է կատարված, որ շենքի կոնստրուկտիվ համաշափությունը չի խախտ-

վուս: Տեխնիկական այս պրիում անշուշտ տվել է շենքին բացադիկ և եղամոդիչնացկունություն: Այս խնդիրը մեծ նշանակություն ունի երկրաշարժերով հարուստ մեր երկրում:

Ա. Բարխուդարյան

Միայն եկեղեցու քանդելը գիտնականներից շատերը արդեն հաճագել էին այն եզրակացությանը, որ 17-րդ դարում երկրաշարժից վերանորոգված եկեղեցու ներսում պարփակված է եղել բուն հին եկեղեցին: Ականավոր գիտնական թորոս թորամայանը, մինչ եկեղեցու քանդելը, կոաժել էր, որ Կաթողիկենի շինության մեջ պարփակված են հին եկեղեցու թեսքեր և պետք է չափազանց զգուշությամբ մոտենալ այս հուշարձանին: Այս հաճամաքը մատնանշում էին մի շարք «տարօրինակ» նշաններ, որոնք բնորոշ չեին այդ ժամանակաշրջանի եկեղեցիներին: